Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), տարկետման իրավունքով (**առաջին փուլ)** և բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի (**երկրորդ փուլ)** առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով 2017/2018 ուսումնական տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտությունների և մասնագիտացումների գծով.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/				Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց տարկետման իրավունքի /վճարովի/	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդա-մենը	Առանց տարկետման իրավունքի		Տար-կետ-ման իրավուն-քով		
		Ընդամենը	այդ թվում՝ ԲՀ			
031101.00.7 - Տնտեսագիտություն, այդ թվում՝	**40**	**25**	**1**	**15**	**80**	
031101.02.7 - Տնտեսագիտության տեսություն	6	4	-	2	9	520.000
031101.03.7 - Ձեռնարկությունների տնտեսագիտություն 031101.13.7 - Ձեռնարկատիրական գործունեություն 031101. 14. 7 - Միկրոտնտեսագիտական վերլուծություն	4	2	-	2	11	520.000
031101.04.7 - Միջազգային տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝ Արտաքին առևտրային քաղաքականություն Միջազգային արժութաֆինանսական հարաբերություններ	12	8	1	4	18	570.000
031101.06.7 - Բնօգտագործման տնտեսագիտություն	5	2	-	3	10	520.000
031101.07.7 - Աշխատանքի տնտեսագիտություն, այդ թվում՝ Աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը ծառ. ոլորտ.	5	3	-	2	10	520.000

031101.08.7 – Մաթեմ. մեթոդներ և մոդելները տնտ. մեջ	5	4	-	1	10	520.000
031101.05.7 - Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, այդ թվում՝ 031101.15.7 - Տնտեսության պետական կարգավորում 031101.16.7 - Մակրոտնտեսական վերլուծություն	3	2	-	1	12	520.000
041101.00.7 - Հաշվապահական հաշվառում և հարկում, այդ թվում՝	**21**	**20**	**2**	**1**	**19**	
041101.01.7 - Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	9	8	-	1	11	570.000
041101.03.7 - Աուդիտ	12	12	2	-	8	570.000
041201.00.7 - Ֆինանսներ, այդ թվում՝	**47**	**39**	**2**	**8**	**73**	
041201.03.7 - Հանրային ֆինանսներ 041201.04.7 - Կորպորատիվ ֆինանսներ 041201.07.7 - Հարկային վարչարարություն 041201.09.7 - Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում 041201.10.7 - Կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում	17	14	-	3	33	620.000
041201.02.7 - Ապահովագրական գործ	4	2	-	2	11	570.000
041201.05.7 - Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	6	5	-	1	9	620.000
041201.06.7 - Բանկային գործունեության կազմակերպում	14	12	2	2	11	620.000
041201.08.7 - Մաքսային վարչարարություն	6	6	-	-	9	620.000
041301.00.7 - Կառավարում, այդ թվում՝	**34**	**26**	**1**	**8**	**86**	
041301.04.7 - Գործարար վարչարարություն /կառավարում/ 041301.13.7 - Նախագծերի կառավարում 041301.14.7 - Սոցիալական կառավարում 041301. 17. 7 - Հանրային կառավարում	18	13	1	5	27	620.000
041301.03.7 - Պետական և մունիցիպալ կառավարում	6	5	-	1	9	620.000
041301. 10. 7 - Հակաճգնաժամային կառավարում	2	2	-	-	13	620.000
041301.11.7 - Զբոսաշրջության կառավարում	6	6	-	-	9	620.000
041301.15.7 - Կառավարման տեղեկատվական համակարգեր, այդ թվում՝ Էլեկտրոնային բիզնես	1	-	-	1	14	520.000

041301.20.7 - Հողագույքային հարաբերություններ, այդ թվում՝ 041301. 16. 7 - Պետական գույքի կառավարում	1	-	-	1	14	520.000
041401.00.7 - Շուկայագիտություն /մարքեթինգ/, այդ թվում՝	**16**	**15**	**-**	**1**	**44**	
041401. 01. 7 - Շուկայագիտություն (Մարքեթինգ), այդ թվում՝ 041401.03.7 - Մարքեթինգային հետազոտություններ 041401.04.7 - Մարքեթինգային հաղորդակցություններ	11	11	-	-	4	570.000
041401.02.7 - Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձ.	2	2	-	-	13	520.000
041401.05.7 - Կոմերցիա	1	-	-	1	14	520.000
041401.06.7 - Բիզնեսի կազմակերպում (մասնագիտացումը՝ Բիզնեսի գնահատում*)	2	2	-	-	13	520.000
056201.00.7 - Վիճակագրություն, այդ թվում՝	**2**	**2**	**-**	**-**	**13**	
056201.01.7 - Վիճակագրություն 056201. 02. 7 - Տնտեսության վիճակագրական վերլուծություն և կանխ. 056201. 03. 7 - Կիրառական վիճակագրություն և մտավոր վերլուծություն	2	2	-	-	13	520.000
ԸՆԴԱՄԵՆԸ	**160**	**127**	**6**	**33**	**315**	

ՀՊՏՀ առկա մագիստրատուրայում ուսման տևողությունը 2 տարի է (4 կիսամյակ), 120 կրեդիտ բեռնվածությամբ, բացառությամբ «Բիզնեսի գնահատում» կրթական ծրագրի:

*«Բիզնեսի կազմակերպում» մագիստրոսական ծրագրի շրջանակներում **Փորձաքննությունների ազգային բյուրոյի հետ համատեղ** իրականացվում է **90 կրեդիտ** բեռնվածությամբ և **մեկ ու կես տարվա տևողությամբ** «Բիզնեսի գնահատում» կրթական ծրագիրը: Ծրագրի նպատակն է Հայաստանում պատրաստել բիզնեսի գնահատման բարձրակարգ մասնագետներ, ովքեր կտիրապետեն բիզնեսի արժեքի գնահատման մեթոդաբանությանը և ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև բիզնես մոդելների և ռազմավարությունների մշակման համար պահանջվող կիրառական խնդիրների լուծման գործիքակազմին: Սույն մագիստրոսական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես բիզնեսի տարբեր տեսակների արժեքի և բիզնես նախագծերի գնահատող փորձագետներ կամ խորհրդատուներ, սեփականության կառավարման մասնագետներ, ինչպես նաև ստեղծել բիզնեսի գնահատման և խորհրդատվական ֆիրմաներ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը /ՀՊՏՀ/, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը/ ՃՇՀԱՀ/, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի (Իսպանիա) և Բոլոնիայի Համալսարանի Ռիմինիի տնտեսագիտական ֆակուլտետի (Իտալիա) հետ իրականացնում են համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր «Նախագծերի կառավարումը զբոսաշրջության և անշարժ գույքի ոլորտներում» մասնագիտությամբ՝ համատեղելով կառավարման ունակությունները, տեխնիկական իմացությունը ճարտարապետության և շինարարության, գեոինֆորմացիոն համակարգերի ասպարեզներում: Կրթական ծրագիրը կավարտվի եռակի որակավորմամբ. ուսանողներին դիպլոմներ կշնորհեն ՀՊՏՀ-ն, ՃՇՀԱՀ-ն և Վալենսիայի Պոլիտեխնիկական համալսարանը: Ուսումնառության առաջին երկու կիսամյակները ուսանողները կուսումնառեն ՀՊՏՀ-ում և ՃՇՀԱՀ-ում՝ իրենց կարգավիճակով (անվճար կամ վճարովի), երկրորդ տարին՝ Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում՝ Բոլոնիայի համալսարանում պրակտիկա անցնելու հնարավորությամբ (վճարովի): Հաշվի առնելով համատեղ կրթական ծրագրի առանձնահատկությունները, շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես նախագծերի կառավարիչներ ինչպես տուրիզմի և մշակութային ժառանգության պահպանման, այնպես էլ անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և շինարարության ոլորտներում: Եռակի դիպլոմները հնարավորություն կտան շրջանավարտներին աշխատելու ինչպես Հայաստանի, այնպես էլ Եվրոպայի աշխատաշուկայում: Տվյալ մագիստրոսական կրթական ծրագրի մրցույթին կարող են մասնակցել Կառավարման բակալավրի կամ մագիստրոսի որակավորում ունեցող, ինչպես նաև ՀՊՏՀ հարակից մասնագիտությունների շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով, որի ժամանակ ստուգվում է նաև անգլերենի տիրապետման մակարդակը: Անվճար մրցույթին կարող են մասնակցել միայն այն դիմորդները, ովքեր նշված կամ այլ մասնագիտությունների գծով 2017-18 ուս. տարում ընդունվել են ՀՊՏՀ անվճար ուսուցման մագիստրատուրա: Ուսման վարձը ՀՀ-ում ուսումնառության ընթացքում կազմում է տարեկան 620.000 դրամ:

Վալենսիայի պոտլիտեխնիկական համալսարանում ուսումը շարունակելու համար դիմորդները պետք է տիրապետեն անգլերենին, քանի որ բոլոր դասընթացները կազմակերպվելու են բացառապես անգլերենով: Նշված մագիստրոսական կրթական ծրագրով նախատեսված կրեդիտների առնվազն 30%-ը (40 կրեդիտ) ուսանողները պետք է կուտակեն Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում, որպեսզի ստանան նաև տվյալ համալսարանի դիպլոմ: Մեկ կրեդիտի արժեքը Վալենսիայում ուսումնառության ժամանակ, կախված դասընթացի առանձնահատկություններից, կազմում է 25-60 եվրո: Այդ դեպքում մագիստրոսական թեզը գրվում է անգլերենով, իսկ պաշտպանությունը տեղի է ունենալու Վալենսիայում՝ երեք բուհերի համատեղ հանձնաժողովի մասնակցությամբ:

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստիծ ևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/				Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց տարկետման իրավունքի /վճարովի/	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդա-մենը	Առանց տարկետման իրավունքի		Տարկետ-ման իրավուն-քով		
		Ընդամենը	այդ թվում՝ ԲՀ			
031101.00.7 - Տնտեսագիտություն, այդ թվում՝						
031101.04.7 - Միջազգային տնտեսական հարաբերություններ	4	3	-	1	15	450.000
041101.00.7 - Հաշվապահական հաշվառում և հարկում, այդ թվում՝						
041101.01.7 - Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	3	3	-	-	25	450.000
041201.00.7 - Ֆինանսներ, այդ թվում՝						
041201.06.7 - Բանկային գործունեության կազմակերպում	3	3	-	-	27	450.000
041301.00.7 - Կառավարում, այդ թվում՝						
041301.04.7 - Գործարար վարչարարություն /կառավարում/	3	3	-	-	15	450.000
ԸՆԴԱՄԵՆԸ	**13**	**12**	**-**	**1**	**82**	

ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստիծ ևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/				Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց տարկետման իրավունքի /վճարովի/	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդա-մենը	Առանց տարկետման իրավունքի		Տարկետ-ման իրավուն-քով		
		Ընդամենը	այդ թվում՝ ԲՀ			
041201.00.7 - Ֆինանսներ (ըստ ոլորտի), այդ թվում՝						
041201.03.7 - Հանրային ֆինանսներ	-	-	-	-	15	370.000

041301.00.7 - Կառավարում (ըստ ոլորտի), այդ թվում՝						
041301.04.7 - Գործարար վարչարարություն /կառավարում/	-	-	-	-	15	370.000
ԸՆԴԱՄԵՆԸ	**-**	**-**	**-**	**-**	30	

Ա. Ընդունելության **առաջին փուլին** կարող են մասնակցել միայն ՀՊՏՀ առկա բակալավրիատի 2016/2017 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտության կամ մասնագիտացման այն շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել են 86 և ավելի միավոր, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների արդյունքում կուտակված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 86: Մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), տարկետման իրավունքով և առանց տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:

Պարտադիր զինվորական ժամկետային ծառայությունից տարկետման իրավունքով հատկացված տեղերի շրջանակներում առկա մագիստրատուրա ընդունվում են արական սեռի այն դիմորդները, ովքեր հաղթահարել են տվյալ մասնագիտության անվճար (ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) համակարգի մրցութային շեմը՝ ըստ ՄՈԳ-երի:

Առաջին փուլի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ս/թ **հունիսի 2-ից 9-ը ներառյալ**:

Բ. **Երկրորդ փուլով** մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ /վճարովի/, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի: Ընդունելության երկրորդ փուլին կարող են մասնակցել ՀՊՏՀ և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները: Երկրորդ փուլով մագիստրատուրա ընդունվելու համար ՀՊՏՀ հարակից մասնագիտությունների, ինչպես նաև այլ բուհերի շրջանավարտները հանձնում են շեմային քննություն համապատասխան մասնագիտության բակալավրիական ծրագրի հարցաշարերով (հարցաշարերը՝ asue.am կայքում): Ըստ ՄՈԳ-երի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են ՀՊՏՀ տվյալ մասնագիտության շրջանավարտները, ինչպես նաև ՀՊՏՀ այլ մասնագիտություններ և այլ բուհեր ավարտած այն դիմորդները, ովքեր դրական գնահատական են ստացել շեմային քննությունից:

Երկրորդ փուլի համար փաստաթղթերն ընդունվում են **ս/թ հունիսի 2-ից հուլիսի 5-ը** ներառյալ, շեմային քննությունները կկազմակերպվեն **ս/թ հուլիսի 6-ին ժամը 10:00-ին**:

Առկա ուսուցմամբ վճարովի մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ ուսման վարձը վճարելուց հետո:

Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում առկա անվճար մագիստրատուրա կարող են դիմել ՀՊՏՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորում ունեցող պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց շեմային քննության, մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ի հիման վրա: Բանակից զորացրված դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում ընդունելության մրցույթին մասնակցելու համար պետք է դիմել մինչև սույն թվականի **օգոստոսի 28-ը ներառյալ**:

Դիմորդները ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է տեղում),
2. բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, ովքեր դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը),
3. անձնագրի բնօրինակը և պատճենը,
4. 3 x 4 սմ չափսի երեք լուսանկար,
5. զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի բնօրինակը և պատճենը,
6. վերջին 3 տարվա ընթացքում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները, ովքեր մասնակցում են տվյալ մասնագիտության գծով հատկացված տեղերի մրցույթին, ներկայացնում են նաև տեղեկանք զինկոմիսարիատից՝ ծառայությունից զորացրվելու վերաբերյալ:

Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրիում և Եղեգնաձորում՝ մասնաճյուղերի ընդունող հանձնաժողովներում:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել **www.asue.am** պաշտոնական կայք կամ զանգահարել (**010) 593-473** հեռախոսահամարով:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և շվեյցարական ՈՒՄԵՖ համալսարանի միջև 2017թ. ապրիլի 12-ին կնքված կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրի իրականացման համաձայնագրի շրջանակներում ՀՊՏՀ-ն 2017/2018 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրոսական ծրագրով հայտարարում է ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.

1. **Գործարար կառավարման մագիստրատուրա (MBA)**
2. **Մասնագիտացված մագիստրատուրա (Executive MBA):**

Դասընթացները կանցկացվեն անգլերենով՝ Եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից, Կանադայից և այլ երկրներից ժամանած պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Դասընթացները հաջողությամբ ավարտած ուսանողները կստանան ՈՒՄԵՖ համալսարանի և ՀՊՏՀ-ի կրկնակի դիպլոմներ:

Շվեյցարական ՈՒՄԵՖ համալսարանը հնարավորություն կընձեռի բարձր առաջադիմություն դրսևորած ուսանողներին սովորել Ժնևի կամպուսում մեկ կամ մի քանի տարով՝ նույն վարձաչափերով, որոնք կգործեն ՀՊՏՀ-ի համատեղ ծրագրի շրջանակներում: Ուսանողները հոգում են վիզաների ստացման, հանրակացարանի և այլ ծախսերը: ՈՒՄԵՖ համալսարանը պարտավորվում է ուսանողներին աջակցել այդ գործընթացում:

2 տարվա վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է 9800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ 4900 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ յուրաքանչյուր տարվա համար: Ուսանողների առաջին խմբաքանակի հավաքագրման դեպքում ՈՒՄԵՖ համալսարանը առաջարկում է վարձավճարների ամբողջական կամ մասնակի փոխհատուցման համակարգ:

Դիմորդները պարտավոր են հաղթահարել ընդունելության քննությունները, որոնք կկազմակերպվեն գրավոր և բանավոր հիմունքներով: Անգլերեն լեզվով քննությունների անցկացման նպատակն է գնահատել դիմորդների ընդհանուր գիտելիքները, անգլերեն լեզվի իմացությունը և ղեկավարման ունակությունները: Եռաժամ բանավոր և գրավոր քննությունները կազմակերպում են ՀՊՏՀ-ն և ՈՒՄԵՖ համալսարանները համատեղ:

Կրթաթոշակների տրամադրումը կախված է ուսանողների պարբերաբար հաճախումներից և ակադեմիական ակտիվությունից: Կրթաթոշակները վավեր են բացառապես 2017/2018 ուսումնական տարվա համար և ամբողջապես փոխհատուցում են երկտարյա ժամանակահատվածի համար նախատեսված վարձավճարների գումարը: Այդ նպատակով թեկնածուները պարտավոր են դիմել կրթաթոշակից օգտվելու համար մինչև 2017թ. օգոստոսի 15-ը:

Առավելությունը կտրվի 80% և ավելի /B գնահատական/ միավոր վաստակած թեկնածուներին:

Թեկնածուները պարտավոր են անցնել հարցազրույց՝ որպես ընդունելության պարտադիր պայման: Երևանից դուրս գտնվող դիմորդների համար հարցազրույցը կկազմակերպվի Սկայպ գործառնական ծրագրով: Դիմորդները պարտավոր են լրացնել ընդունելության թերթիկներ և ունենան պահանջվող փաստաթղթերի ցանկը:

Կրթաթոշակի տրամադրման որոշումը կայացվում է երկու կողմերի համաձայնությամբ՝ դիմորդի հարցազրույցի արդյունքների ամփոփման համաձայն:

Դիմորդը նախնական ընդունելության քննությանը մասնակցելու նպատակով պարտավոր է վճարել 50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ անկախ քննության արդյունքներից: Ընտրված դիմորդները պետք է անցնեն նաև հարցազրույց՝ որպես ընդունելության ընթացակարգի բաղկացուցիչ մաս:

Մագիստրոսական ծրագրով ընդունվել ցանկացող դիմորդները պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. ավարտական փաստաթղթի՝ բակալավրի դիպլոմի բնօրինակը և պատճեն,
2. դիպլոմի հավելվածը և պատճեն,
3. դիմորդի լրացված հայտը,
4. անձնական թերթիկը,
5. անձնագիրը և անձնագրի պատճեն,
6. 3 լուսանկար
7. մոտիվացիոն նամակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերենով, իսկ թարգմանված փաստաթղթերը պետք է վավերացվեն նոտարի կողմից: Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում գործերը չեն ընդունվում:

Ուսման վարձերի և կրթաթոշակների չափերը կախված են դիմորդի նախնական ընդունելության քննության արդյունքներից, մասնավորապես՝

85 և ավելի միավոր ստացած ուսանողները ստանում են 100% կրթաթոշակ:

70-84 միավոր ստացած ուսանողները ստանում են 70%-ով վարձավճարները փոխհատուցող կրթաթոշակ:

60-69 միավոր ստացած ուսանողները ստանում են 50%-ով վարձավճարները փոխհատուցող կրթաթոշակ:

50-59 միավոր ստացած ուսանողները կրթաթոշակ չեն ստանում:

50 միավորից ցածր ստացած ուսանողները չեն ընդունվում:

Քննության օրն է՝ 2017թ. օգոստոսի 26-ը

Ծրագիրը կսկսվի 2017թ. սեպտեմբերի 18-ից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՊՏՀ Գիտության և ասպիրանտուրայի բաժին: Կենտրոնական մասնաշենք, 3-րդ հարկ, 320 սենյակ: Հեռ. (010) 593-426: